

1799. — Ս. Խաչին դուրսը, արեւելեան կողմ, սառնիճին յիշատակարանը՝ կափարիչին վրայ.

“Տէմրճի պաշին, օրթախն Լոլթվին յիշատակի 1799.”

1799 Սեպտ. 22. — Լ. քուած խաչքարի մը վրայ.

Տէր † Աստուած
Յիսուս † Քրիստոս

“Յիշատակ է սուրբ խաչս Վանեցի քուրքճի Սարուխանի որդի Մեղքոնի որդի Դասպարին եւ ծնողացն նազլըին եւ Որդին Պաղտասարի, ԹՎին ՌՄԽԸ. Սեպտմբի ԻԲ.”

1799. — Լ. քուած Մաբմարի մը վրայ.

“Յիշատակ է Բենկացի խաչատրեանց մահտեսի Ստեփաննոս ամիրային եւ կենդանեաց նոցին մահտեսի Ալիքսանին, մահտեսի Երանուհոյն եւ Համայն կենդանեաց եւ ննջեցելոց, Թուին ՌՄԽԸ (= 1799).”

1800. — Լ. քուած քար մը.

“ԹՎին ՌՄԽԹ. Դուռնս Զմշկածազու, Թաղարցի Արեւանց Սրկաւազ մահտեսի Սիրունին, ի յիշատակ Հանգուցեղոցն Առաքելին, Երանոսին, Պանարին, Մոզոսին, Արէլին, Յօնանին, Մարթային եւ Համայն կենդանեացն.”

1800. — Ս. Հրեշտակապետի մատրան խաչկալին վրայ.

“Յիշատակ է ախտէր մահտեսի Սարգսին եւ Հանգուցեալ մահտեսի Լուսիային եւ Համայն կենդանեաց եւ ննջեցելոցն. ԹՎին ՄԽԹ.” (= 1800) Ին:

1801. — Էջմիածնի՝ նոր եւ անարուեստ վրձինէ մը ելած պատկերին յիշատակարանը.

“Յիշատակ է սուրբ պատկերս որ ի Ղուրջունլի մաղազան եղեալ բեռնակիր եղբարցն յիշեցնէ.”

1802. Աստուածածնի պատկերի մը յիշատակարանը.

“Յիշատակ է Կեսարացի պարոն Յօսելին եւ կենակցւոյն Սուլթան զատընին եւ Համայն կենդանեաց եւ ննջեցելոցն ՌՄԽԸ. Թուին.”